

Քօղի տակ կարմրելով և սրտատրոփ հարցնում է նա հաստատուն ձայնով.

— Այստեղ է բնակում ա. ք.

— Այո. ի՞նչ էք հրամայում:

— Գործ ունիմ. խնդրեմ այս տոմսակը . . .

— Հրամայեցէք:

Ապաստաւորը դուռը փակում է և տոմսակը տանում:

Անցնում են 5, 8, 10 վայրկեան:

— Անտարակոյս նա շտապով կարեւոր բան մի գրում է. Հեռուից, երկրորդ սենեակում վարագոյրը շարժում է. ցանցաձև, նեղ ու բարակ մարմին մի տատանում է և հետզհետե մօտենում: Նախասենեակի դռնում երևում է ոտից մինչև գլուխ մոլթ պիսակ, ցանցաձև կտորով պատառված մէկը. դժգոյն կառաւր աչքի է զարնում այս ցանցերի վերև, և առանց թենոյի ձեռքերում բռնած ունի և տրորում է այցատոմսը:

Օրիորդի երկչոտ աչքերը յառեցան մատենագրին վերայ. Հետաքրքրութիւնն և ակնկալութիւնը ճնշում են խոյս տալու դիտաւորութիւնը:

Մատենագիրը երկու քայլ հեռաւորութեամբ կանգնում է և նայելով եկողի երեսը որոշ ձայնով ասում է.

— Չեղ չեմ կարող ընդունել:

Ինչի՞ համար, համարձակ հարցնում է օրիորդը, որ չէր սպասում այնպիսի անակնկալ ծանուցման:

— Որովհետեւ զբաղած եմ:

— Ես ձեզ շատ արգելք չեմ լիներ, Չեղ մէկ—երկու խօսք ունիմ ասելու գործի մի մասին, Մէկ երկու վայրկեան . . .

— Հա՛. . . եթէ այդպէս է, հրամայեցէք, Խնդրեմ նստէք, Ինչով կարող եմ ձեզ օգտակար լինել:

(Թաք. 45.)

Ս. Մ.

ՃԱՆԱԿԱՐԿՈՐԴՈՒԹԻՒՆ Ի ՆԱՀԱՆԳՆ ԿԱՐՈՒՑ.

(1878 հւիտ. 19. — 1879 փետր. 8.)

Մեր այս ի պաշտօնէ կատարած ճանապարհորդութեան պատճառն կամ նպատակն արդէն հրատարակուեցաւ («Արարատայ. փետր. ամսաթերթում»), բայց մեր ծանօթներն ու բարեկամներն մեզ կստիպեն, որ մեր ունեցած դիտողութիւններն ևս հրատարակեմք. ի հարկէ նոքա կը ցանկանան լսել մեր դիտողութիւններն իրրեւ հետաքրքրական, բայց մեք կանխաւ կը խոստովանիմք, թէ մեր այս յանձնառութեամբ պիտի չկարողանամք նոցա հետաքրքրութիւնն գոհ անել ինչպէս բանիրուն ճանապարհորդ մի, որ հին

ու նոր պատմութեանց հմուտ լինելով, գոհ կանէ ամեն հետաքրքիր մտքերն իւր հաւանական և գրեթէ ճշմարիտ նկատողութիւններով: Ի վերայ այսր ամենայնի, կը յուսամք թէ մեր այս հրատարակութիւնն որչափ որ չկարողանայ գոհ անել բանիրուն ընթերցողաց հետաքրքրութիւնն, գոնէ նիւթ մի կաւելցնէ նոցա մտածմանց Հայաստանի հիւսիսային արեւմտեան անկիւնում գտնուած հայկական հնութեանց այժմու դրութիւնն ստորագրելով, և երբեմն Հայ պատմութեանց մէջ յիշուած և այժմ անորոշ մնացած տեղերու, քաղաքներու, և դետերու և ուրիշ յատուկ անուններու վերայ մեր կարծիքն հաղորդելով: Ուրեմն առանց ձանձրացնելու սկսինք, մեր ճանապարհորդութեան առաջին մասն ղնելով Վաղարշապատէն մինչև Ի Վարս:

Ա.

1878 հոկտ. 19ին կէս օրէն վերջն ելանք ճանապարհ Արագածու լեռան արեւմտեան հարաւային թեւէն անցնելով, և երեկոյեան ժամերումն հասանք Ի Միհրեփան, ուր քիչ ժամանակ միայն մնալով, հետեւալ զիտողութիւններն ունեցանք:

Միհրեփան. Այս գիւղի բնակիչներն Պարսիկներ են. և ամենէն մօտ եղող հայաբնակ գիւղերն են Տէտէլու, և Խըրմըզլու. ոչ մօտակայ հայերն և ոչ միհրեփանցի թիւրքերն չունին իրենց մէջ որ և է աւանդութիւն այս գիւղի կոչման մասին. արդէն երկար ժամանակներէ ի վեր բնասէր անձինք էլ պատահած չեն սոյն գիւղերում, որ նախնեաց աւանդութիւններն պահպանէին, և այսպէս բոլորովին անհետ չլինէր ժողովրդոց մէջէն, ինչպէս է այժմ Հայաստանի շատ կողմերում: Մեր կարծիքով այս անունը մնացած կը լինի Հայոց հիթանոսութեան ժամանակէն, և այս Միհրի անունէն առնելով. թերեւ այն ժամանակներն Միհրի մեհեան ևս եղած լինի այստեղ, ինչպէս կերելի անուան բարդութենէն, որ կը պարզուի Միհր և վանի, Տեղւոյն դրութիւնն իսկ կարելի է մի տեսակ վկայութիւն համարել այս մեր կարծիքին. ըստ որում Արագած լեռին դէպի հարաւային արեւմուտք երկնցած թեւին վերայ եղած ամեն գիւղերէն աւելի բարձրն է, *) ուր տեղէն կը ծագէ արեւն բովանդակ Շիրակայ դաշտին վերայ մինչև Բասենի և Օլթիի սարերն լուսաւորելով: Եւ այս գիւղն ընդարձակ հայեացք ունի արձակ դաշտերու և հեռաւոր լեռներու վերայ, դէպի հարաւ և արեւելք կը նայի Արարատայ դաշտի բոլոր տարածութիւնը, Գեղամայ լեռներն ու Մասիսի շղթայն ամբողջ. և դէպ յարեւմուտք կը դիտէ բովանդակ Շիրակայ

(*) Թէպէտ այժմ կան աւելի բարձրագիւղ գիւղեր, բայց նոքա ամեփն է 1828 թուի Ռուսաց եւ Օսմանցոց պատերազմէն վերջն հիմնուած են, որոց արտերն եւս կը վկայեն թէ այն տեղերն հին ժամանակներում աւելի մօրիներ եւ մայրաւորներ եղած են: Իսկ հին գեղերում առհասարակ կերեւելն հնութեանց մնացորդներ, վանքեր եւ ուրիշ նշաններ:

դաշտն Արշարունեաց և Երասխաձորի գաւառներն մինչև Բասենի և Վրաստանի լեռներն. Միհրեմանի այս հայեացքն վկայութիւն մի կը լինի ասացինք այստեղ Միհրի վանք լինելուն, ըստ որում Միհր Պարսից չաստուածներէն մին է. և որք արեգակն կանուանէին այսպէս. և Հայք իսկզբան չաստուածներ չունենալով հետզհետէ դրացի ազգաց չաստուածներն իւրացնելու ժամանակ, Միհրն ևս պաշտեցին. *) որոյ տաճարն ընդհանրապէս կը կոչուէր Հայոց մէջ տաճար կամ մեհեան **) արեգական, և տեղն Միհրեման: Հայ պատմութեանց մէջ ոչինչ յիշատակութիւն չեմք գտներ այս տեղոյ մասին գրուած. միայն թէ Արմենակայ տնկած անտառն գուցէ այս սահմաններում եղած լինի Արագածոտն գաւառի ամենէն բարձր զիրքումն: Միհրեմանայ մէջ թերևս տաճարի և այլ հնութեանց հիմունք դուրս գան, որուն մասնաւոր կարծիք կը տան բնակիչներն:

Սոյն հոկտ. 10 երեկոյեան արեւը մտնելու ժամուն հասանք ի Խրրմըղու, ուր իջեանեցանք տանուաւր Գրիգորի մի սենեկումն:

Խրրմըղուց փնակը, Գիշերն այս գիւղն անցուցինք. ուր ժողովեցան մեզ մօտ գիւղին գրեթէ բոլոր հասակաւոր մարդիկը, որոց հետ իրենց ապրուստի և աշխատանաց վերայ խօսեցանք. որ իրենց պատմածին նայելով, աշխարհի ամեն վայելչութենէն զրկուած, միայն հաց մի ունին, զոր իրենք կը գործեն, և այն շարաշար աշխատանօք ձեռք կը բերեն, ու իրենց բաւական էլ չլինիր. ըստ որում արտերնին քիչ է և եղածին մեծ մասն քար ու աղառած. և իրենց աշխատութիւնն աւելի առատ հունձք եղած տարին միոյն 5 կամ 6 միայն կը քաղեն. որով ծախքերնին հոգալէ ետքն այլ ևս ուտելիք չմնար իրենց, հետեաբար ձմեռնային օրերն պարտք անելով կը հոգան իրենց ծախքը. և կը հասնի ժամանակ մի, որ պարտատէրը կը գայ կը տանի եղներն, երբեմն կը գրուէ արտերն, երբեմն էլ ծանր տոկոս մի բարդելով մուրհակ մի կառնու և ապա կը մեկնի. այսպէս երկրագործին կարողութիւնն հետզհետէ կը պակասի և ինքն յուսահատ կը մնայ տարուէ տարի. մինչև տարի ևս կանցնէ, որ բնաւ սերմ չցանէր: Այս փիճակին հասածներուն հարկաւոր խօսքեր շատ խօսելէ զատ, աւելի ևս իրենց բնութեան յարմար մի ծանապարհ ցոյց տուինք, որ հետզհետէ իրենց ձեռքերն զօրանան իրենց վաստակին բաւականանալու: Եւ այս սորվեցուցինք որ կարելի եղածին չափ ջանան, գործերնին աւելցնեն, և հետեւին որ իրենց կարօտութիւնն իրենց ձեռագործով լեցնեն. զոր օրինակ, հետեւին որ մի

(*) Արմաւրի մէջ եւս կը յիշուի տաճար արեգական՝ բլուրի գլուխը շինուած, (որուն բեւեռագրերէն մի քար կը գտնուի այժմ Էջմիածնի ձեմարանում) որ նա եւս Միհրի անունովն եղած գուցէ լինի:

(**) Հայ բանասէրներէն ոմանք Պ. Մ. Էմինի կարծեացն հետեւելով, մեհեան բառն Միհր անունէն հանուած կը համարին. բայց մեզ սոյնպէս կերեւի, որ արդի պարսկերէնի մեհեան բառին հայերէն դարձութեան մէջ գործածուածն է, որ կը նշանակէ տեղի կամ բնակատան. որով և և մեհեան Արամազդաց տեղով, կիմանամք բնակարան Արամազդայ:

խալվար սերմի փոխանակ, երկու խալվար ցանեն, փոխանակ եղներով վարելու, ձիով վարեն արտերն. ըստ որում իրենց գործը պիտի տեսնուի 25—35 բուբլի արժող ձիով մի, և իրենք կը գործեն միևնոյն գործն աւելի դանդաղութեամբ և վնասներով 100—150 մինչև 300 բուբլի գնուած եղներով և գոմէշներով. և թէ մի լուծք եզն պահելու համար պէտք եղած տարեկան ծախքով կարելի է երկու ձի պահել. և մի լուծք գոմէշի տարեկան ծախքովն չորս ձի պահել. այսպէս թեթեւ ծախք ունենալէն զատ աշխատութեան ժամանակէն ևս շատ պիտի շահին, ըստ որում մինչև եզին կամ գոմէշին մի ամբողջ աւօս վարելը, ձին երեք աւօս կրնայ վարել. նոյնպէս և կալի միջոցին եղներն և գոմէշներն արդեանց գրեթէ կէսն կուտեն չափազանց դանդաղ քայլերով, և գործն ուշացնելով *): Այս գիւղի բնակչաց մի մասն ի բնէ Վաղղուանայ գիւղերէն են, 1828ի պատերազմէն վերջն տեղափոխուած. և այս գաղթողներէն մին ծերութեան հասակումն տակաւին կը ցանկանար իւր բնիկ գիւղին Քերսի բնակիչ լինել վերստին. Սորա ցանկութեան պատճառն ուրիշ բան չէր, եթէ ոչ իրենց գիւղին և դաւառին այն բազմատեսակ մրգերն ու այգիներն, որոնցմէ զոկուած էր 50 տարիներէ ի վեր. Այս պատճառաւ ևս շատ խօսքերէ զատ, մեղադրեցինք ծերոյն թէ ինքն այգեպանութեան հմուտ լինելով, բնաւ մտաբերել չէր, որ այգի հասցնէ և Խըրմըղլու գիւղում. Որուն համարձակ ձայնիւ պատասխանեցին ոմանք թէ իրենց տեղն սար է, և այգի չհասնիր. բայց նոյն իսկ իրենց խօսքով կը հերքէին իրենց այս կարծիքն. ըստ որում իրենք կը յիշեն թէ երբեմն Արարատայ և ոչ մի գիւղումն այգի կամ ծառատունկ չէր գտնուէր. և շինութեանց փայտերն անգամ Սաւաշէ անտառէն կերթան կը բերեն եղեր, միշտ կարծելով որ սոյն դաշտին մէջ այգի կամ ծառատունկ չհասնիր. բայց այժմ կը տեսնեն որ Արարատեան դաշտումն ամեն գիւղ այգիներով և ծառերով չըջափակուած է, և թէ նոքա այլ ևս իրենց շինութեան փայտերն իրենց այգիներէն կրնան հասցնել. Նոյն իսկ Խըրմըղլուեցիք որ երբեմն Սոանլըի անտառէն փայտեր կը բերեն և Վաղարշապատցոց վերայ կը ծախեն եղեր, այժմ Վաղարշապատէն կը գնեն իրենց փայտերն. և այս փոփոխութիւնն եղած է Արարատայ գիւղերում Էջմիածնի անտառին սկզբնաւորութենէն, որուն հետեւած են և բոլոր գիւղերն. Այս մասին ուրիշ պատեհիւ աւելի երկար գուցէ գրեմք յօգուտ գիւղական ժողովրդոյ, իսկ այժմ անցնինք մեր ճանապարհին շարունակութեանը:

Հոկտ. 20. Առաւօտուն արշալուսին ճանապարհ ելանք Խըրմըղլուէն, և Արագածայ զառիւյրի ճանապարհովն դէպ յԱղէքսանդրապօլ յառաջ գնացինք. մեր անցած ճանապարհի երկու կողմերն զանազան գիւղերում կերեխն կիսականգուն վանքեր և եկեղեցիներ, առհասարակ տաշածոյ քարե-

(*) Այս մասին ուրիշ անգամ յատկապէս գիւղացոց համար մասնաւոր գրուածքներ յուսալի է թէ ունենամք:

րով շինուած. այս գիւղերն ըստ մեծի մասին թիւրքաբնակ են, ու նորանոր անուններով կը կոչուին. որոց նախկին Հայկական անուններն չեն յիշուիր այժմ, գուցէ վանքերու արձանագրութիւններն (նձէ կան և մնացած են) յայտնեն հետզհետէ նոցա կոչումը, և կարելի լինի նոր Հայաստանի և Հին Հայաստանի բուն տեղերն ու քաղաքներն իմանալ ճշդութեամբ, թէ որ գաւառաց կը պատկանին, և թէ հինն ու նորն իրարմէ որչափ կը տարբերին:

Սոյն Արագածոտն և Շիրակ գաւառներու հայ գիւղականներն հետզհետէ եկեղեցիներ կը շինեն իրենց համար բաւական վայելուչ յօրինուածով. մինչդեռ թիւրքաբնակ գիւղերու մէջ ամայի և աւերակ կիսականգուն կը մնան նախնեաց շինած հոյակապ վանքերն: Զայս տեսնելով ճանապարհորդի մտքում հարցում մի կը ծագի, թէ ի՞նչու հայերն այս եկեղեցիներն թողել, ու գնացել նոր եկեղեցիներ կը շինեն, և ոմանք էլ բնաւ չեն կարող շինել ու գրեթէ եկեղեցի մի չունին: Սորա պատճառն այսպէս կը գտնուի: Երբեմն Պարսից տէրութեան այս երկիրներու վերայ բռնացած ժամանակներն, հայ գիւղականքն իրենց զրացի Պարսիկներէն կողոպտուելով և զրկուելով, հետզհետէ փախուստ տուած են անշէն մնացած հովիտներում և բլրակներում պատսպարուելով. և իրենց բուն հայրենի գիւղերն Պարսիկներէն զրաւուելով, իրենք ստիպուել են ապաւինած տեղերում իրենց համար տուն շինել և նոր գիւղ հաստատել. և իրենց աղքատութեան տառապանաց ներքեւ մինչև ցայսօր չեն կարողացել գոնէ մի վայելուչ եկեղեցի ունենալ. և միւս կողմէն պարսիկներն ու քիւրդերն իրենց ձեռքը մնացած հոյակապ վանքերն քանդել են և կը քանդեն: Այժմ խիստ սակաւաթիւ են այն գիւղերն որ մի մի վայելուչ եկեղեցի ունին. իսկ մնացեալներն առհասարակ անշուք և անյարմար, որք ո՛չ զրսէն և ո՛չ ներսէն կարելի չէ որ եկեղեցի կարծուին: Այս փիճակն ունեցող հայ գիւղականներն արդէն որ և է վայելչութենէ զուրկ լինելէ զատ, իրենց հացն ևս չարաչար և դառն աշխատանք կը հայթայթեն. և շատերն իսկ ամեն տարի ուրիշին օգնութեանը կարօտ կը մնան: Զարաչար աշխատանք կը հայթայթեն ասացինք իրենց հացն, ըստ որում լծակով մի գիւրութեամբ վերնալիք քարն հինգ վեց հոգի հազիւ կը վերցնեն. իրենց անհրաժեշտ պէտքերն իրենց երկրագործական բերքերով հոգալու փոխանակ, այլոց բերքերով կը հոգան, այլոց ձեռագործներն կը հագնին և կը գործածեն առհասարակ. և այնպիսի գաղափար մի ևս կը տածեն իրենց մէջ, թէ այն օտարաց փայլուն ձեռագործներով հագուողներն աւելի պատուաւոր կը լինին քան այն հայերն, որք իրենց բերքէն իրենց ձեռագործով պատրաստուած հանդերձներով կը հագուին: Եւ կարի սակաւաթիւ են այնպիսի տնտեսագէտ գիւղացիք, որ իրենց պահած ոչխարի բրդէն իրենց տան մէջ մանուած և գործուած ասուիներ (շալ) կը հագնին. և միայն այսպիսիներն են որ փոքր ի շատէ վայելչութիւն և հանգիստ ապրուստ ունին:

Այս հանգամանքն ունեցող Շիրակայ քանի մի գիւղերէն անցնելով կէս

օրին հասանք Պողոս — Բեսեկ գիւղը, որ նորաշէն վայելուչ եկեղեցի մի ունի, որոյ բնակիչներն առհասարակ արթուն կերեւին մօռք, բայց պէտք եղածին պէս չեն գործեր իրենց գործը. և այս իրենց միայն այն երկրում մնացած լինելէն պատճառած է ի հարկէ: Այստեղ ևս գիւղական տնտեսավարութեան վերայ խօսելով երկու ժամու չափ ժամանակ անցուցինք, գիւղացիք համակրելով կը լսեն երկրագործութեան դիւրութեան և արդիւնաւորութեան մասին եղած խօսքերն, բայց մեր միայն խօսքն ու նմանութիւններն բաւական չէին լինէր համոզելու թէ իրենք ևս կարող են դիւրութեամբ աշխատել և շահել, քան թէ այն մեծամեծ ծախքերովն ու դժուար աշխատութեամբն ինչպէս սովորաբար կը շարունակեն մինչև ցայսօր: Զոր օրինակ շիրակացիք ընդհանրապէս կը հերկեն իրենց արտերն քութանով, և այն քութանը կը քաշին սովորաբար երկու լուծք գոմէշ և վեց լուծք եղներ: սորա փոխանակ առաջարկեցինք նոցա, որ ութ լուծքին փոխանակ չորս ձի լծեն, միայն թէ փայտեղէններով պատրաստուած քութանին փոխանակ բոլորովին երկաթէ քութան գործածեն: Ծախուց տարբերութիւնն արդէն իրենք գիւղացիք ճշգրտութեամբ կրնան համեմատել, թէ ութ լուծք գոմէշին կամ եղին ուտելիքն քանի՞ ձիու բաւական կը լինի: Գարձեալ թէ երկու մշակ աւելի դիւրութեամբ կը պահպանեն և կը գործածեն չորս ձին, քան թէ ութ մշակ ութ լուծք գոմէշներն կամ եղներն: այս օգուաններէն աւելի կարժէ իրենց համար ձիուն արագութիւնը, որ եղին երեք օրէն վարած տեղը մի օրում կը վարէ: մանաւանդ այս հանգամանքն այնչափ հարկաւոր է Շիրակայ և Արարատայ հայ երկրագործներուն, որչափ որ արեն կամ ջերմութիւնն լուացարարներուն, ըստ որում սոցա սերմանելու ժամանակն շատ կարճատեւ է, այնպէս որ շատ անգամ իրենց սերմը լման ցանելու չեն հասնիր: իսկ եթէ եղին կամ գոմէշին քայլն ձիու քայլին փոխուի, շատերն իրենց սերմանելը պիտի լմնցնեն քանի որ գետինը կակուղ է և վարելու յարմար: և այնչէստե պիտի չհարկադրուին ժամանակէ դուրս այն կարծր գրեթէ քարացած գետինը վարելու շարաշար աշխատութեան: Երբ այս երկաթէ քութանն իրենց անծանօթ լինելը մէջ բերին, և տեսակ տեսակ անյաջողութիւններ կը գուշակէին, դարձեալ իրենց այն ծանր աշխատութիւնն դիւրացնելու համար առաջարկեցինք, որ փոխանակ ութ լուծք եղով և քութանով հերկելու, իւրաքանչիւր լուծքն առանձին իւրեանց արօրովն հերկեն մի օր, և երկրորդ օրն միւսնոյն հերկածն հակառակ գծով հերկեն արօրն աւելի խորն ուղղելով: և եթէ այս կրկին հերկով չկարողանան քութանի խօփին չափ խոր իջնցնել, երրորդ օրն երրորդ անգամ ևս վարեն միւսնոյն տեղն փոքր մի ևս խորն իջնելով: այս կերպով քութանին ութ աւուր վարելիք տեղը երեք օրէն պիտի լմնցնեն: այս կերպին համոզուեցան բոլորովին մանաւանդ այն կարգի տնւորներն, որք իրենց սեպհական լուծքերով քութան չեն կրնար բանեցնել, և ի հարկէն ստիպեալ պիտի սպասեն որ քութան ունեցողներն իրենց արտերն հերկեն վերջացնեն, և ապա աղքատներն ընկերանալով ութ տնւոր միասին ութ

օրէն մի մի օրավար արտ հերկէն իրենց . . .

Պօղազ — Բէսէնէն ճանապարհ ելնելով, մի ժամու չափ ժամանակ ևս մեծ խորա — լիւրէն գիւղն հանգելէ ետքն հասանք Ղազէքսանդրապօլ, ուր իջեանելով Բարայեան Մահտեսի Մկրտիչ Աղայի տունն, երկու գիշեր այս մեծանձն Հայոյն հիւրասիրութեանն հանդիպեցանք, մի կողմէն այս մեծ գերդաստանին սուգը *) սգալով, և միւս կողմէն իւր որդւոց և սերնդեանն համար իւր աշխատութեամբն ու Աստուծոյ աջողկումն պատրաստուած ապագայ փառաց յուսովն կը մխիթարուէինք:

Աղէքսանդրապօլու Հոգեւոր դպրոցն ու օրիորդաց դպրոցն հանդիպեցանք Հոկտ. 22ին, ուր արդարեւ դասատուաց և աշակերտաց աշխատասիրութիւնն կերեւի ամեն հանդիպողին, բայց մի հանգամանքի վերայ (տեղւոյս ներկայն չափ) Աղէքսանդրապօլուց ուշադրութիւնը կը ցանկամք զարթուցանել. և այս հանգամանքն է աշակերտաց փոքրածիւ լինելն. ըստ որում քաղաքումն արդէն 4000 տան չափ հայք կը համարուին, և հոգեւոր դպրոցում 300ի չափ միայն աշակերտք կը սովորին: Այս մասին եղած մի խօսակցութեան մէջ, իմացանք որ շատ ծնողք իրենց որդիքն կը ներկայացնեն դպրոցի տեսչութեան, և չեն ընդունուիր տեղւոյ ներդրութեան պատճառաւ. և արդարեւ ուսումնարանը նեղ կը գայ և 300 աշակերտաց: Գոնէ ըստ արտաքին երեւութին այնպէս կը կարծեմք թէ Աղէքսանդրապօլուց մի մասն իրենց մտադրութեան մէջ կը յաջողին և կը ճոխանան. մի՞թէ չյաջողիր իրենց ընդարձակել դպրոցի դրութիւնը, և բազմաթիւ մանկանց հոգեկան կերակրոյն (կրթութեան) զրկանքն իսպառ վերցնել. մի՞թէ այս իրաւունքը տակաւին զգալի չէ՞ Աղէքսանդրապօլուց, թէ ամեն մանուկ հաւասարապէս իրաւունք ունի ստանալ իւր հօրմէն կրթութիւն, հետեաբար մանկութիւնն իրաւունք ունի հայրութենէն, և ի՞նչպէս կը հանդարտի այժմու հոգաբարձուաց սիրտն երբ իրենց պարտաւորութիւնն կը կատարեն միայն քանի մի որդւոց հատուցանելով իրենց պարտիւքը: Մինչդեռ խիստ մեծադոյն մասին մանուկներն կը զրկուին իրենց իրաւունքէն. 4000 տուն ժողովուրդ միջին հաշուով 4000 աշակերտ ունենալու է. այս համեմատութեան կէսն եթէ առնուք, գոնէ 2000 աշակերտ լինելու է այժմ հոգեւոր դպրոցում. բայց մենք 300 միայն կը տեսնեմք. որ ասել է թէ 1700 մանուկ կը զրկուին այժմ Աղէքսանդրապօլում իրենց հոգեկան կերակրէն: Այս զրկանքը վերցնելու համար ուշադրութիւն դարձնելու են մանաւանդ ծնողք, որ անմիջապէս կը յաջողին պատասպարել իրենց որդիքն և այն յարկի տակ, ուր հոգեկան սնունդ պիտի առնուն. ինչպէս որ կը յաջողին ծնողք ընդարձա-

(*) Այս սուգը սոյն գերդաստանի մեծ տիկնոջ նոյն իսկ Մահտեսի Մկրտիչ աղայի ամուսնայն բարեպաշտուհի Մահտեսի Խոնրմի մահուան սուգն էր, որուն մահը ոչ միայն այս գերդաստանին, այլ նաեւ Աղէքսանդրապօլու շատ աղքատ ընտանեաց եւս մի մեծ կորուստն էր, եւ կը տղային առհասարակ, կը մտթեմք որ փոխանակ Սառա յին Ռեբեկայն օրհնէ Աստուած սոյն գերդաստանի որդիքն մխիթարելով:

կել իրենց տներն իրենց որդւոց աճելութեանն համեմատ:

Հոկտ. 22 ին կէսօրէն՝ զկնի ճանապարհ ելանք Աղէքսանդրապօլէն, և երեկոյեան ժամերումն հասանք ի Երզրդ - Չախլախ: *) Այս գիւղին հարաւային արևելեան կողմն կերելին հոյակապ վանքի կիսականգուն որմերն թիւրքարնակ գիւղի մէջ, որուն այժմ տեղացիք իրկինե անունը կրտան:

Արգինայ գիւղախոսք. Երկինէ գիւղի մասին տեղացի հայերն և թիւրքերն միաբերան կաւանդեն, թէ սա մեծ Աթոռ է եղել երբեմն, թէ այստեք մեռոն եփած է: Տեղացւոց այս աւանդութիւնն յիշեցոյց մեզ Խաչիկ Ա. Վաթողիկոսի (972—991) բացած դպրոցն որուն համար Հայ պատմիչներն Արգինայ գիւղաքաղաքն կը յիշեն, ուստի երևելի վարդապետներ և իմաստուններ ելած են, որք մինչև Բագրատունեաց թագաւորութեան անկումն և այլ ևս յետոյ յունական իմաստակ աստուածաբաններն կը պապանձեցնէին, Հայաստանեայց եկեղեցւոյ ճշմարիտ դաւանութիւնն բարձր ի գլուխ պանծացնելով: Այս Երկինէ գիւղի տեղական ստորագրութիւնն կը զննմք այստեղ, որպէս զի զիւրին լինի ընթերցողաց համեմատել պատմեաց գրուածին հետ: Երկինէն Մեծ Հիրակ կոչուած գիւղին ուղղակի արևմտեան կողմն է գրեթէ մի ժամու հեռաւորութեամբ: Որում - Քիլիսե և Խրզըլլախլախ գիւղերու հարաւային կողմն 20 բուլէի հեռաւորութեամբ, Կարս—Սուի կոչուած գետոյն հիւսիսային եզերքում, ուստի կանցնի նոր շինուած խճուղի ճանապարհն (Աղէքսանդրապօլէ դէպ ի Կարս), Այս գիւղն Անիէն հեռի է գրեթէ 4—5 ժամու ճանապարհաւ:

Այստեղ կը զննմք ահաւաւիկ և Ստեփաննոս Տարօնեցւոյ մի պարբերութիւնն որ միւս պատմիչներէն աւելի բացայայտ կը նշանակէ Արգինայի տեղն:

« Յաւուրս Կիր - Ժանայ Յունաց կայսեր, և թագաւորութեան Հայոց
« Աշոտոյ, ի ՆԻԱ. թուին (972), զկնի Վահանայ և Ստեփաննոսի եկաց
« Վաթողիկոս Հայոց Տէր Խաչիկ Եպիսկոպոս Արշարունեաց, քուերորդի
« Տեառն Անանիայի, որ միապետեալ **) խաղաղացոյց զաշխարհս Հայոց
« ամս ԺԹ. և նորոգեաց զտուն Վաթողիկոսարանին ի Հիրակ գաւառի ի գիւղաքաղաքին
« Արգինայ յեզերս Ախուրեան գետոյ, ի հանգստարանի Տեառն
« Անանիայի Հայոց վերագիտողի: »

Ստեփաննոս Տարօնեցի գիրք Գ. գլ. Թ:

Նոյնպէս և Մատթէոս Ուռհայեցին կը յիշէ:

« Եւ տէր Ներսէս ի Բագրեւանդ գաւառէ իշխան Հայոց, և սա էր այր

(*) Գիւղ մի է Հայաքնակ. Աղէքսանդրապօլէն (դէպ ի Կարս) երեք ժամու հեռաւորութեամբ, որ այժմ գաւառագլուխ է Շիրակայ գաւառին, ուր կը նստի եւ գաւառապետն Ռուսաց տիրապետելէն ի վեր:

(**) Միապետեալ կասէ, ըստ որում՝ Վահան Վաթողիկոսի անկմանէն վերջն Ստեփաննոս նստաւ, բայց Վահան եւս դնաց Վասպուրականայ արքունիքն ապաւինեցաւ, ու այնտեղ իբրեւ Վաթողիկոս կը վարուէր. մինչև ինքն եւ Ստեփաննոս վախճանեցան միեւնոյն ժամանակում:

«կորովի և յոյժ հանճարեղ, բանիրուն և իմաստասեր, ուսեալ ի մեծն
«Արգինայ, հասեալ ամենայն շնորհաց աստուածեղէն կրօնարանացն, և
«կարող էր կալ ի զիմի ամենայն իմաստնոցն Հոռոմոց հզօր, զիտութեամբ
«և զարմանալի տոննախօսութեամբ:» Մատթ. Ուռհ. Դ. 12:

Ահա Տարօնեցւոյ այս խօսքն ու Շիրակայ ժողովրդոց աւանդութիւնն կը
միաբանին, թէ Արգինայ գիւղաքաղաքն այժմու Տաճկաց Երկինե կոչածն է.
և այս ձայնի տարբերութիւնն անշուշտ յառաջ եկած կը լինի տաճկաց զբո-
րութեանն իբր Արգինայ գրուածն Երկինե ևս կարգալու յարմարութենէն: *)

(Կշարհանալի):

Կ. Վ. Ս.

ՀԵՂԻՆԱԿ ԵՒ ՄԿՆԵՐ

Հեղինակ միշտ կգանգատէր,
Թէ գրբուածներն իւր բոլոր
Մըկան ձեռքէն չէր ազատվեր,
Նըրծուելով միշտ ամեն օր:
Խեղճը շատ տեղ դարան փոխեց,
Լարեց անթիւ և որոգայթ,
Քաջ կատուններ նոյնպէս խընամեց.
Բայց բոլոր ջանքն էր գայթ ի գայթ,
Ոտանաւոր, յօդուած արձակ,
Ողբերգ և վէպ զիւցազներգակ,
Խաղ են եղեր օրն ի բուն
Այն անիծեալ մկներուն:
Չարածըճի յանդուգ մկներ
Դիւցազների անմահ գործեր,
Փըշրանքից ևըս անպատիւ
Նընջէին զիշեր ու տիւ . . .
Շըքեղ յաղթանակ
Դաքնիդիայ պըսակ
Անգութ մըկան ատամի տակ
Նլինէին խայտ ու խայտառակ

(*) Այս մասին մնացած տարակոյսն իսպառ պիտի փարատուի, երբ տեսնեմք բա-
ցուած Անանիա Կաթողիկոսի հանգստարանն, զոր կը յիշէ Տարօնեցին ի Գր. Գ. ԳԼ.
Գ. նոյնպէս եւ Խաչիկ Կաթողիկոսի հանգստարանն, զոր այստեղ եկեղեցւոյն հիւս-
տային կողմն կը յիշէ Տարօնեցին յատեն. «Սա (Խաչիկ) լցեալ սուրբք, կատարեալ
ժամանակաւ ի բարեղ ծերութեան փոխի յաշխարհէս, եւ դնի յիւրում հանգստա-
րանին ըստ հիւսիսոյ կուէն եկեղեցւոյն Արգինայի, զոր ինքն շինեալ էր ի ՆԼԹ.
թուին (990):»